XXVIII

# ՆՈՐ-ԴԱՐ

XXVIII

№ 1 Երկուշաբթի, 24 հոկտեմբերի — 1883—1911 — Երկուշաբթի, 24 հոկտեմբերի № 1

ՀԱՏԸ 5 ԿՈՊԷԿ.

Գաւառներից խմբագրութեան դիմողները խնդրում ենք իրանց գրութիւնները ուղղել «Ն. Աղամեանի» տպարանի հասցէով.

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Այս տարի եւ «Նոր Դար»-ի սոյն համարը լոյս է հանւում թերթի հրատարակութեան իրաւունքը վերապահելու համար։

Մինչդեռ խմբագրութիւնը մտադրութիւն ունէր ներկայ տարուանից թերթի հրատարակութիւնը վերսկսելու, ձախորդ անակնկալները եկան խոչընդոտ լինելու դրան։ Թերթիս խմբագրի և Դաշնակցութեան օրգան «Դրօշակի» խմբագրութեան միջև ծագած ընթերցողին յայտնի գործը, ահա մի ամբողջ տարի է տարագրութեան է մատնել թերթիս խմբագրին՝ բարոյական և նիւթական անհաշւելի վնաս պատճառելով նրան։

Բացի Սպանդարեանի կրած զրկանքներից՝ խմբագրութիւնս ցաւ է յայտնում, որ նա հնարաւորութիւն չունի ներկայումս կաթողիկոսական հրատապ խնդրում իւր մասնակցութիւնն ունենալ, իւր ասելիքը լսելի անել, մանաւանդ վերջին մի քանի տասնեակ տարում «Նոր-Դար»-ը իւր ձայնը միշտ լսելի է արել հայ ժողովրդին և կաթողիկոսական ընտրութեան գործում ներգործական դեր խաղացել։

### ՎՃԻՌ

—

Դաշնակցական կուսակցութեան նախաձեռնութեամբ Փարիզում հրաւիրւած Յեղափոխական դատարանը «Նոր-Դար» հայ լրագրի խմբագիր Սպանդար Ամիրջանեան Սպանդարեանցի և Դաշնակցութեան գործի մասին, որ յարուցել էր Դաշնակցական կուսակցութեան կենդրոնական օրգան «Դրօշակ»-ում Սպանդարեանի՝ Պօլից. Դեպարտամէնտի հետ յարաբերութիւն ունենալու մէջ մեղադրութեան հրատարակութեամբ։

Դատարանի կազմն էր՝ Ա. Փ. Փէյտ, որին դատաւոր էր ընտրել Սօց.-Յեղափոխական կուսակցութիւնը, Վ. Ի. Իգօրև, որին դատաւոր էր ընտրել Ռուսաստանի Սօց.-Դեմօկրատական բանւորական կուսակցութիւնը, և Ա. Փ. Ստաալ, որին դատաւոր էին ընտրել վերոյիշեալ երկու դատաւորները և միաժամանակ նաև նախագահ նշանակել։

Քննելով դատարանին ներկայացրած փաստաթղթերը, լսելով էքսպերտների եզրակացութիւնն ու վկաների ցուցմունքները, ինչպէս նաև Սպ. Սպանդարեանի և Դաշնակցութեան ներկայացուցչի բացատրութիւնները, հետևեալ հարցերը դրուեց վճռելու։

1. Հաստատւո՞ւմ է արդեօք այն բանը, որ դատարանում յայտնի եղած հանգամանքներով Սպանդարեանը ծառայելիս է եղել Պօլից. Դեպարտամէնտում։

2. Հաստատւո՞ւմ է արդեօք այն բանը, որ Սպանդարեանը (կամ նրա գիտութեամբ նրա ընտանիքը)՝ նրա վիճակը թեթևացնելու և կամ այլ պատճառներով դրդեց Կոստանդին Սպանդարեանին ծառայութեան մտնել Պօլից. Դեպարտամէնտ։

3. Հաստատւո՞ւմ է արդեօք այն բանը, որ Սպանդարեանը՝ Կոստանդին Սպանդարեանի Պօլից. Դեպարտամէնտ ծառայութեան մտնելուց յետոյ աջակցեց նրան քաղաքական լրտեսութեան գործում։

4. Արդեօք Դաշնակցութեան կուսակցութիւնը բարեխղճօրէն վարուեց՝ մեղադրելով Սպան. Սպանդարեանին Պօլից. Դեպարտամէնտի հետ յարաբերութիւն ունենալու համար, տպագրելով այդ բանը, և արդեօք նա հիմք ունէ՞ր փաստերը մեղադրութեան համար արժանահաւատ համարելու։

5. Արդեօք Դաշնակցութեան կուսակցութեան կողմից չի՞ խախտուել մարդուն պատկանած ձևական պաշտպանութեան իրաւունքը, որի դէմ Դաշնակցութիւնը հրապարակով այդպիսի մեղադրանք է անում։

Հարցերից առաջին երեքին դատարանը բացասական պատասխան տուեց։ Դատարանում գործի բացայայտուած հանգամանքները ոչ միայն չհաստատեցին ա) Սպանդարեանի մեղադրութիւնը Պօլից. Դեպարտամէնտի հետ յարաբերութիւն ունենալու մէջ անմիջապէս կամ իւր եղբայր Կոստ. Սպանդարեանի միջոցով, բ) որևէ ճնշում Կոստ. Սպանդարեանի վրայ՝ Դեպարտամէնտ ծառայութեան մտնելու նպատակով և գ) աջակցելով Կոստ. Սպանդարեանին քաղաքական խուզարկութեան գործին, այլ և չէին կարող հիմք ծառայել կասկածելու Սպ. Սպանդարեանին այդ տեսակ վարմունքների մէջ։

Չորրորդ հարցին դատարանը դրական պատասխան է տալիս։ Նախքան Սպ. Սպանդարեանի դէմ «Դրօշակում» հրապարակելը ամբողջ հանգամանքը այնպէս էր, որ Դաշնակցութեան կուսակցութիւնը բաւականաչափ հիմունք ունէր մեղադրանքը համարելու լիովին հաւատալի, անկեղծօրէն համոզուած էր Սպ. Սպանդարեանի մեղաւորութեան մէջ, հետևապէս գործել է լիովին բարեխղճօրէն՝ տպելով այդ մեղադրութիւնը։

Հինգերորդ հարցին դատարանը դրական պատասխան է տալիս։ Աչքի առաջ ունենալով, որ այդ մեղադրութիւնը զետեղուած է յեղափոխական կուսակցութեան կենդրոնական օրգանում, որ նրա արժանահաւատ լինելը յենուած էր բացառապէս կուսակցութեան հեղինակութեան վրայ և որ կուսակցութիւնը դրա բոլոր պատասխանատուութիւնը իրա վրայ է վերցնում, դատարանը գտնում է, որ Դաշնակցութեան կուսակցութիւնը՝ նախքան մեղադրանքը հրապարակելը՝ պարտաւոր էր այդ մասին տեղեկացնել Սպ. Սպանդարեանին։

Այս ձևական պարտաւորութիւնների կատարումը այս դէպքում կարող էր ազատել կուսակցութեանը ակամայ սխալից, իսկ Սպ. Սպանդարեանին էլ՝ իր բարի անունն արատաւորող ծանր հետևանքներից։

Ինչ վերաբերում է Սպ. Սպանդարեանին նիւթական վարձատրութիւն տալու հարցին Դաշնակցութեան կուսակցութեան կողմից այն վնասների համար, որ պատճառել էր նրան վերոյիշեալ մեղադրութիւնը, դատարանը հնարաւորութիւն չունենալով գործի մէջ եղած փաստերի վրայ հիմնուելով որևէ պատասխան տալու և թոյլատրելի չհամարելով գործի վերջաւորութիւնը յետաձգելու դրամական պահանջների քննութեամբ, որոշեց.

Առաջարկել Սպ. Սպանդարեանին և Դաշնակցութիւն կուսակցութեան՝ այդ հարցը իրա ամբողջութեամբ վճռել արբիտրաժի միջոցով՝ յանձին դատարանի նախագահի և կամ նրա անդամներից մէկի, իրա ցուցմամբ։

Այս վճիռը կայացրել են միաձայն և ստորագրել երեք դատաւորները։ Դաշնակցութիւն կուսակցութեան և Սպ. Սպանդարեանին տրւում է, այս մի մի պատճէնը նախագահի և դատաւորների ստորագրութեամբ, որոնք որ այդ բոլորին Փարիզում կը գտնուեն։ Դաշնակցութեան կուսակցութիւնը պարտաւորւում է այս վճիռը ամբողջութեամբ տպելու «Դրօշակի» մերձակայ №-ում, իսկ Սպ. Սպանդարեանին իրաւունք է տրւում հրատարակելու այս վճիռը ամբողջութեամբ լրագրերում իրա ընտրութեամբ։

Դատարանի այս վճիռը վերջնականապէս կը պատրաստուի և կը յայտարարուի կողմերին տարոյս օգոստոս ամսի վերջին։ Փարիզ, 20 յուլիսի 1911 թ.

Նախագահ դատարանի՝ Ա. Ստաալ

Դատարանի անդամ՝ Բ. Իգօրև

### ՈՒՄ ՈՐ ՋԵՒՍԸ ՈՒԶՈՒՄ Է ՊԱՏԺԵԼ՝ ՆԱԽ ԽԵԼՔՆ Է ԱՌՆՈՒՄ

—

Սպանդար Սպանդարեանի յայտնի գործը վերջացաւ, բայց միայն իւր սկզբնական շրջանում։ Միջկուսակցական դատարանը միաձայն կայացրած իւր դատավճռով հաստատեց, որ Ս. Սպանդարեանը որև ձևով ոչ մի մասնակցութիւն չի ունեցել քաղաքական լրտեսութեան գործում։ Որ դատարանը այդպիսի վճիռ պիտի տար, դրա մասին ոչ ոք էլ չէր կասկածում. որովհետև ամէն մի ոչ-կոյր մարդու համար էլ պարզ էր և ակներև այս ծանր մեղադրանքի անհեթեթութիւնը, որ բարձում էին Սպ. Սպանդարեանի վրայ։ Ով ծանօթ է «Նոր Դար»-ի խմբագրի թէ հասարակական-քաղաքական ֆիզիօնոմիային և թէ իբրև մարդու, այդ դարշելի անհեթեթութեան հէնց առաջին երևան գալու րոպէին հասկացաւ, որ այդ մեղադրութիւնը— կամ մի սարսափելի սխալ է և կամ թէ նախամտածուած հրէշային սուտ է՝ թելադրուած կուսակցական կրծած շահերից։

Մեզ իսկապէս չի հետաքրքրում դատարանի վճիռը, որովհետև Սպանդարեանին ձևական կերպով անմեղ ճանաչելու մէջ մենք չէինք կասկածում։ Աւելի շատ կարևոր է հասարակական տեսակէտից մեղադրողների այն այլանդակ պատկերը, որ երևան եկաւ այդ դատավարութեան միջոցին։

1910 թ. օգոստոսին «Դաշնակցութիւն» կուսակցութեան օրգան «Դրօշակում» լոյս տեսաւ մի պաշտօնական յայտարարութիւն Սպ. Սպանդարեանի՝ Ոստիկան. Դեպարտամէնտում ծառայութեան մասին, ընդ նմին յայտնելով, թէ այդ սոսկալի մեղադրութիւնը հիմնուած է «անժխտելի փաստերի ու փաստաթղթերի վրայ», որ՝ «արդարանալու ամէն փորձ զուր է», որ՝ «կուսակցութեան Նեմեզիդան կը պատժի դաւաճանին և պրովոկատորին»։

1911 թ. յունուարին Փարիզում, Բուրցեւի բնակարանում, Սպանդարեանի և մեղադրողների հէնց առաջին իսկ տեսակցութեան միջոցին պարզւում է, որ «անժխտելի փաստերն ու փաստաթղթերը»—այդ նախկին պաշտօնական Լ. Մենշիկովի բերանացի տուած յայտարարութիւնն է եղել, որը հէնց այդտեղ էլ, Սպ. Սպանդարեանին տեսնելով իւր դիմաց կանգնած, հրաժարւում է իւր մեղադրութիւնից, յայտնելով, որ նա, Սպ. Սպանդարեանը, այն մարդը չէ, որին ինքը տեսել է 1904 թ. յունուար ամսում Ոստիկ. Դեպարտամէնտում, և որ նա, որին ինքը համարում էր «Նոր-Դար»-ի խմբագիր-հրատարակիչ, վերջինիս հետ ընդհանուր ոչինչ չունի և որ մի ցաւալի թիւրիմացութիւն է առաջացել։

Դրանից յետոյ պէտք միջկուսակցական ձևական դատարան կայանար, որը հրաւիրելու նախաձեռնողը պիտի լինէր «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը. այդ դատարանում մեղադրողները պէտք է իրենց վարմունքի մասին բացատրութիւն տային, ապացուցանէին, որ թիւրիմացութեամբ իրենց գործածը բարեխղճութեամբ է եղել։

Չորս ամիս (յունուար, փետրուար, մարտ, ապրիլ) դաշնակցականների կուսակցութիւնը ձգձգում է իւր խնդիրը դատարան հրաւիրելու մասին։ Դատարանի առաջ երկու կողմից էլ— Սպ. Սպանդարեանը և «Դաշնակցութեան» ներկայացուցիչը պարտաւորուել էին՝ լուռ մնալ և մինչև դատավարութեան վերջանալը ոչինչ չհաղորդել մամուլին։

Սպ. Սպանդարեանը իւր տուած խօսքը ճշտութեամբ կատարեց, այն ինչ ռուսական մամուլում՝ դեռ ևս դատավարութեան ընթացքում՝ հաղորդուած էր սխալ տեղեկութիւններ Սպ. Սպանդարեանի արդարանալու վերաբերմամբ, ինչ որ դատարանով, որը կայացել է իբր թէ «Դաշնակցութեան» և այլ կուսակցութիւնների ներկայացուցիչներից, և առ հասարակ որոշ հոգով ու մտքով դիտաւորեալ տեղեկութիւններէին հրատարակւում։

Բայց սրանք դեռ աննշան բաներ էին, որոնք միայն կիսով չափ էին պատկերացնում «յեղափոխական» Դաշնակցութեան ղեկավարների պատկերը։ Երբ տեսան, որ ոչ մի կերպ չէր կարելի Սպ. Սպանդարեանին իրեն մեղադրել, իրենց հեղինակութիւնը—պրեստիժը, բարձրացնելու համար՝ այդ պարոնները կանգ չառան մի նոր անազնւութեան առաջ—այդ «գործի» մէջ խառնել Սպանդար Սպանդարեանի ընտանիքը։ Ապացոյցնե՞ր էք ուզում։ Սակայն ի՞նչ հարկաւոր են դրանք, քանի որ իրանք մեղադրողները «անձեռնմխելիութեամբ» են պաշտպանուած, ուստի և գործում են աներկիւղ...

Վերջապէս դատարանը դուրս բերաւ իւր դատավճիռը։

«Դաշնակցութեան» կուսակցութեան օրգան «Դրօշակը» պարտաւորուելով տպագրել իւր մերձաւոր համարում այդ վճիռը—չի տպում։ Ինչու՞ համար։

Ահա հէնց այստեղ է, որ պէտք է սկսուի այդ յայտնի գործի երկրորդ շրջանը,—Սպ. Սպանդարեանի դատը «Դաշնակցութիւն» կուսակցութեան հետ։

Ամէն մի քաղաքակիրթ հասարակութիւն պէտք է իւր անողոք դատավճիռը տայ մի այդպիսի կուսակցութեան վերաբերութեամբ, որը իդէալականութեան դիմակի տակ՝ իսկապէս բարբարոսաբար ցեխոտում և անմաքուր միջոցներով ոտնատակ է տալիս մարդու և քաղաքացու անբռնաբարելի իրաւունքը, որ ամենացայտուն կերպով՝ իրենց նեղ, կատարեալ գազանային բնազդներին բաւականութիւն տալու համար՝ ծաղրում են ճշմարտութիւնն ու արդարութիւնը։

Տ.

### «ՆՈՐ-ԴԱՐԻ» ԽՄԲԱԳԻՐ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԸ

Սպանդար Սպանդարեանը տարաւ յաղթանակը։ Բուրցեվի բնակարանից, որտեղ գտնւում էին Բուրցեվը, Մենշիկովը, «Դրօշակի» խմբագիրը և այլք, Սպանդարեանը դուրս գալով, կարող էր հռովմայեցի զօրավարի պէս բացականչել՝ veni, vidi, vici (եկայ, տեսայ, յաղթեցի)։

Այդ յաղթանակի մասին, որ հայոց ինքնաճանաչ մամուլի յաղթանակն է, հեռագրով հաղորդեցի «Հովիտին» անցեալ տարուայ վերջումը։ Իմ հաղորդածս եկան հաստատեցին այնուհետև Վ. Լ. Բուրցեվի երկու նամակը՝ իրեն «Նոր-Դար»-ի խմբագրին ուղղած, որ լոյս տեսան և Կովկասեան լրագրերում, և Բուրցեվի հեռագիրը՝ „Утро Россіи“ լրագրին քաշած, որ լոյս է տեսել „Реабилитація С. Спандарьяна“ խորագրով, ինչպէս ինքը Բուրցեվը ինձ ասաց։

Սպանդար Սպանդարեանը չէ եղել Պօլից. դեպարտամենտի ագենտ։

Ահա, մեղադրանքի աղբիւր Մեն-

չիկովը՝ Սպանդար Սպանդարեանին տեսնելով՝ վճռականապէս յայտարարում է, որ դա այն մարդը չէ, որ եկել էր Պոլսից և որին ինքը ճանաչում էր ու տեսել է Պոլից. դեպարտամենտում 1904 թ. յունուար 17—20 ագենտ գրուելիս և որը արձակուած է ագենտի պաշտօնից նոյն թուականի ապրիլին վասն անընդունակութեան *)։

Թիֆլիզում ոչ թէ Ս. Սպանդարեանին մօտիկ մարդկանց, այլև ամբողջ քաղաքին յայտնի պէտք է լինէր, որ Սպանդար Սպանդարեանը, «Նոր-Դարի» խմբագրապետը, նոյն այդ 1904 թ. յունուարին դեռ Մետեխի բանտումը բանտարկուած էր և յունուարի 23-ին գիշերը մեկնել է աքսոր։ Այդ ես ստուգել եմ և գիտեմ, որ հակառակ Սպանդարեանի ստիպողական խնդրանաց՝ թոյլ տալու նրան մի առ ժամանակ ևս մնալ Թիֆլիզում իր մասնաւոր և ընտանեկան գործերը կարգի բերելու համար, նրա խնդիրքը մերժուեց, առարկելով, թէ իշխան Գոլիցինը շատ նեղացած է, որ Սպանդարեանը դեռ Թիֆլիզումն է։

Սպանդար Սպանդարեանի անմեղութիւնը պարզ էր։ Ինքը Մենշիկովը չշկլուած ասել է, թէ 1904 թ. այնպիսի խառնակութիւն է տիրում եղել Պոլից. դեպարտամենտում, որ ամեն տեսակ խարդախութիւն կարող էր այդ միջոցին տեղի ունենալ, այսինքն թէ մի անուան փոխարէն գրել մի ուրիշ անուն։ Բայց թէ ինչպէս է եղել այդ, չի կարողացել իմանալ, որովհետև այն ժամանակ նրան չէր կարող հետաքրքրել ագենտ գրուողի անունը. «տեսայ մարդուն և ինձ առացին, թէ այս մարդը «Նոր-Դարի» խմբագիր Սպանդար Սպանդարեանն է,—ասել է Մենշիկովը. այժմ ինձ համար պարզ է, որ իմ տեսածը Կոստանդին Սպանդարեանն է եղել, որ եկել էր Պոլսից դեպարտամենտին ծանօթ գլխաւոր ագենտ Վէյսմանի հետ։

Այսպիսով և «Դրօշակի» գլխաւոր վկաների համար պարզ էր Սպ. Սպանդարեանի անմեղութիւնը։ Կատարուել է մի վերին աստիճանի ծանր յանցանք—գիտութեամբ թէ անգիտութեամբ այդ միևնոյն է,—պէտք էր առաջ յայտնել եղելութիւնը—Սպ. Սպանդարեանի անմեղութիւնը, ասել է Բուրցեվը։ Սա իւրայինների և «Դրօշակի» խմբագրի հետ լիովին ընդունելով Սպանդար Սպանդարեանի անմեղութիւնը և խորհրդակցելով որոշում են, որ «Դրօշակը» յետս կը կոչէ Սպ. Սպանդարեանի դէմ հրատարակած մեղադրանքը։ Այդ միջոցին «Դրօշակի» խմբագիրը ցանկութիւն է յայտնում նախօրէն տեսնուելու Սպ. Սպանդարեանի հետ. Վ. Լ. Բուրցեվը յանձն է առնում հետամուտ լինելու և գտնելու, թէ ինչպէս և ով է մացրել «Նոր-Դարի» խմբագրապետի անունը Պոլից. դեպարտամենտի ագենտների անուանացուցակում։

— Պոլից. դեպարտամենտից բան իմանալը շատ դժուար է, եթէ չասեմ անկարելի է, ասաց ինձ Բուրցեվը, բայց ես կաշխատեմ և յոյս ունեմ, որ գտնեմ։ «Դաշնակի» («дашнаки», այդպէս է անուանում Բուցեվը դաշնակցականներին) տպել են մեղադրանքը, ինձ ոչինչ չէին ասել, ես այդ իմացայ լրագրերից. նրանք շատ սխալուել են. այդպիսի ծանր մեղադրանք տպելուց առաջ պարտաւոր էին ստուգել գործը զանազան ճանապարհներով և միջոցներով։ Եթէ աւելի առաջ տեսնուած լինէինք Սպ. Սպանդարեանի հետ, աւելի շուտ կը վերջացնէի ես գործը։ Գործին մի փոքր ծանօթանալուց, խսկոյն պարզ էր Սպ. Սպանդարեանի անմեղութիւնը։ «Դրօշակը» յետս կը կոչէ իր արած ամբաստանութիւնը և միևնոյն ժամանակ «դաշնակի» պաշտօնապէս կը խնդրեն միւս կուսակցութիւններից՝ կազմելու մի միջկուսակցական դատարան, որի առաջ «դաշնակի» պիտի ջանան հաստատելու, որ իրենք բարեխղճութեամբ (добросовѣстно) են գործել Սպ. Սպանդարեանի դէմ, առանց այլ ևս մեղադրելու նրան։ Մեղադրանք չկայ այլ ևս, և նրանք գիտեն՝ որ Սպ. Սպանդարեան այդ գործում չկայ. ագենտ գրուել է Կոստանդին Սպանդարեան—պրոֆէսսոր-ուսուցիչ Պօլսում։ Բուրցեվը կատարեց իր մարդկային պարտքը խսկոյն. նա առանց այլևայլութեան գրեց Սպ. Սպանդարեանին, նոյնպէս և հեռագրեց „Утро Россіи„ լրագրին. այդ մասին ես յիշեցի վերը։

«Դրօշակի» խմբագիրը ևս շտապեց այստեղից ժընև իր պարտքը կատարելու։

*) Հետաքրքիր է իմանալ, քանի որ վերջին փաստը յայտնի էր «Դրօշակի» վարիչներին, ինչ խղճով նրանք յայտարարում էին «Դրօշակ»-ում, թէ Սպանդարեանը մինչև օրս էլ ամսական 200 ռ. է ստանում Պոլից. դեպարտամենտից։ Խմբ. «Հովիտի»

## Ի՞նչ էին խօսում Գործի եւ «Նոր-Դար»-ի խմբագրի մասին

Մինչև որ ռուսից յետոյ հայը կը կատարէ իր պարտքը, աւելորդ չեմ համարում այստեղ համառօտակի ամփոփելու այստեղի Դաշնակցական և այլ օտարազգի շրջաններում խօսած-լսածները։

Սպ. Սպանդարեանի անմեղութեան լուրը տարածուելով ռուս, լեհ և այլ շրջաններում ասում էին, որ այդ գործը դժոխային գործ է, Դրէյֆուսեան գործի երկրորդ հրատարակութիւնը և մեծ յարգանքով էին վերաբերւում դէպի Սպ. Սպանդարեանը։ Գրեթէ ամենքն էլ հիացմունքով են խօսում նրա հոգւոյ զօրութեան և կամքի ուժի վրայ, որ ամեն տեսակ արգելքների յաղթելով, առանց մէկի օգնութեան, կարողացաւ գալ այստեղ մէն մենակ մի ամբողջ կուսակցութեան դէմ ճըշմարտութեան յաղթանակը տանել։ Հայ շրջաններում էլ շատերը ասում էին, եթէ Սպանդարեանը այդ գործի տակից էլ դուրս գայ, նշանակում է մենք ունենք մի այնպիսի ոյժ, որին չենք տեսնում և այդ բանի մէջ մենք պէտք է որոնենք մեր անբաղդութեան գաղտնիքը։ Երևի Սպանդարեանը իր կեանքի վերջումը մի խոշոր գործ ունի կատարելու։

Մի ռուս պատմում է, որ Բուրցեվը Սպ. Սպանդարեանի մասին մեծ յարգանքով և համակրանքով է խօսում։ Սպ. Սպանդարեանը շատ լաւ տպաւորութիւն է արել նրա վրայ։ Նա անմեղ է և անմասն այդ գործին, ասել է Բուրցեվը։ Միւրիշը Սպադարեանի ծանր դրութեան մէջ, Աստուած գիտէ, թէ ինչեր չէր անիլ, ինչեր չէր ասել, ինչ լեզու չէր գործ դնել իր պատիւը պաշտպանելու այդ ծանր մեղադրանքից արդարութիւնը ապացուցանելու համար։ Ես զարմանքով նկատեցի, որ Սպանդարեանը, ինչպէս երևում էր, գիտէր բաներ, բայց չէր ասում, լռութեամբ անցնում էր, թէպէտև իր օգտին պիտի ծառայէր, եթէ ասէր։ Նա չկամեցաւ ուրիշին մեղադրելով իրան պաշտպանել։ Ներկայ գտնուողների վրայ շատ լաւ տպաւորութիւն արաւ... ոչ մի աւելորդ խօսք չէր արտասանում. նա կուրէկտ էր. վարմունքը благородный (ազնիւ) և վերաբերմունքը՝ իսկ որ ջէնտլմէն—по джентльменски, ասել է Բուրցեվը։

Այս պատմողը Մոսկուայի „Русское Слово" լրագրի Փարիզեան թղթակից Վ.-ըն է։

Դաշնակցականների շրջանում պատմում էին, որ «Դրօշակի» խմբագիրը նոյնպէս համակրութեամբ է խօսել Սպ. Սպանդարեանի մասին. ստացած տպաւորութիւնը ճնշող ու ցնցող է եղել։ Մեծ և ցաւալի սխալ է կատարուել, նեղացած ասել է «Դրօշակի» խմբագիրը. մարդը բոլորովին անմեղ է և ինքը խորապէս համոզուած է։ «Սկզբին արդէն ես այդ բանին չէի հաւատում, տատանւում էի, ասել է այդ մարդը. ի՞նչ արած, պէտք է մեր սխալը մի կերպ ուղղենք»

Այնուհետև ուշադրութեան արժանի է այն, որ մեղադրողը հայ կազմակերպութիւն է, մեղադրուածը հայոց գործիչ, յայտնի ազգային ուղղութեան Դրօշակակիր և Նոր-Դարականների պարագլուխ։ Հարցնում եմ՝ ինչ արեցինք, ո՞րպիսի փորձ գործ դրեցինք մենք Սպանդարեանի դէմ մեղադրանքը մի կերպ ստուգելու տպագրութեան տալուց առաջ. մենք, որ պարծենում ենք, թէ ամեն տեղ ենք, ամեն բան տեսնում ենք և մեր աչքերից ոչինչ չի վրիպիլ։ Ցաւելով պէտք է խոստովանենք, որ ոչինչ չենք արել. այն ինչ ինքն իրան յարգող մի լուրջ կազմակերպութիւն պարտաւոր էր այդպիսի ծանր մեղադրանքը իր պատասխանատուութեան վրայ առնելով, ոչ մի միջոց չխնայել գործը ստուգելու,

Մի՞թէ դժուար էր հարց ու փորձով ստուգել, թէ Սպանդար Սպանդարեանը 1904 թ. յունուար ամսին, մասնաւորապէս այդ յունուարի 17—20-ին ո՞րտեղ է գտնուել։ Եթէ այդ արած լինէինք, մենք խսկոյն կիմանայինք, որ յունուարի 17—20-ին Սպանդար Սպանդարեանը չէր կարող Պետերբուրգում լինել, քանի որ Թիֆլիզումն է եղել։

«Դրօշակի» խմբագրութիւնը մի ամբողջ տարի Սպանդարեանի դէմ մեղադրանքը իր պորտֆէլյում քնեցնելով, հէնց որ իմանում է, թէ նրա յօբելեանը կատարուելու է... ինչպէս, մի դաւաճանի յօբելեան. թոյլ տալ, որ նա դարձեալ գոյութիւն ունենայ և նրա անունը փառաւորուի և միջոց ունենայ մեզ համար այնքան հակառակ «Նոր-Դարը» վերսկսելու... ոչ, ոչ, և հրատարակում է մեր Դաշնակցութիւնը անպատուող մեղադրանքը։ Ջէ, պարոններ, յամառել աւելորդ է և անօգուտ, պէտք է հետևել և լսել «Դրօշակի» խմբագրին—հաշտուել Սպ. Սպանդարեանի հետ և այս ցաւալի գործին վերջ տալ, մի հերքումն հրատարակել և մի կերպ գոհացնել Սպանդարեանին. այդ է միայն օրինաւոր ճանապարհը, սխալը պէտք է խոստովանել։

Երկրորդ հանգամանքի, այսինքն ֆլասը, ծախքը պահանջելու խնդրի վերաբերութեամբ տիրապետող կարծիքն այս էր, որ Դաշնակցութիւնը պարտաւոր չէ վճարելու։ Մէկն ասում էր փող չունենք, միւսը թէ՝ Մենշիկովը թող վճարի, երրորդը՝ Նոր-Դարականները կարող են վճարել. պէտք է գոհ լինին բարոյական յաղթանակով. ինչ կը լինէր, եթէ անմեղութիւնը չպարզուէր. այդ որ մտածեն, այդ էլ բաւական է։

Աւելորդ չեմ համարում կցելու այստեղ Կոստանդնի ասած խօսքերը «Նոր-Դարի» խմբագրի մասին՝ Բուրցևի բնակարանում, շատերի ներկայութեամբ։

—Ես ապրել եմ երկար ժամանակ Պօլսում. Սպանդարի հետ մեր յարաբերութիւնները կարուած էին այդպիսով։ Սպանդար ագենտ չէ եղած։ Երբ ես Պոլից. Դեպարտամենտումն էի յունուարին (1904), դեպարտամենտը շատ զբաղուած էր Սպանդարի գործով. նա յունուարին Թիֆլիզի Մետեխի բանտումն էր։

Այդ պատմեց ինձ Բուրցևին մի մօտիկ բարեկամ. նոյնը լսեցի ծերունի Ն.-ից, որ մի հին յեղափոխական է և շատ յարգուած. ծանր գործեր քննելու միջոցին դիմում են նրա աջակցութեան՝ օգտուելու նրա երկարամեայ փորձառութիւնից։ Դա նոյնպէս ներկայ է եղել Բուրցևի բնակարանում Կոստանդնի հարցաքննութեան միջոցին։

Արդէն «Նոր-Դարի» խմբագրի հետ մի երկու անգամ տեսակցութիւնից և խօսակցութիւնից, Բուրցեվի, Մենշիկովի և մեզ միւսներիս համար պարզ էր գործը, ասաց ինձ ծերունի Ն.-ը, որ «Նոր-Դարի» խմբագիրը ամենևին ագենտ եղած չէ, նա անմեղ է։ Միայն մի բան մեզ համար անբացատրելի էր մնում, թէ ինչպէս է պատահել, որ «Նոր-Դարի» խմբագրի անունը մտել է Պոլից. դեպարտամենտի անուանացուցակի մէջ։ Այդ միջոցին մեզ ամենիս համար անսպասելի յայտնւում է Կոստանդին Սպանդարեանը, որ խոստովանւում է, որ ինքն է եղել Պետերբուրգում և իրան, իր կամաց հակառակ, ագենտ են գրել։

## Դաշնակցականների շրջաններում մտքերի եւ տրամադրութիւնների նոր հոսանք.

Այս միջոցին ես նկատեցի դաշնակցականների շրջանում մտքերի, կարծիքների և տրամադրութիւնների մի նոր և Սպ. Սպանդարեանին բոլորովին հակառակ հոսանք։ Խօսում էին, որ դաշնակցական զանազան բիւրօներից դժգոհ էին «Դրօշակի» խմբագրից, որ «անձնատուր» է եղել և իրան տանել տուել, համաձայնելով Բուրցեվի հետ ընդունել է Ս. Սպանդարեանի անմեղութիւնը։ Աւելի խիստ նամակներ էին ստացուել Կովկասից. ֆլասը կամ ծախքը վճարելու միտքը նրանց կատաղեցրել է։ Ասում էին, որ «Դրօշակի» խմբագիրը չգիտէ, թէ ինչ անէ, ինչպէս դուրս գայ իր անել կացութիւնից. մեկ կողմից ճշմարտութիւնը, Սպանդարեանի անմեղութիւնը, միւս կողմից 175 հազար անդամներից (այդպէս են պարծենում դաշնակցական չեֆերը) բաղկացած կազմակերպութեան հեղինակութիւնը, վարկը—պէտք է որ սեղմէին «Դրօշակի» խմբագրին—վտանգւում էր այդպիսով այս վերջինի դիրքը։ Սրա մասին ասում էին, որ հազար երանի կը տար, եթէ իրան ազատէին իր ստանձնած դերից։ Բոլոր խօսածներից կարելի էր նկատել այս միտքը, աւելի լաւ է, որ դատարանը վճիռ չկայացնի, քան այդ վճիռը լինի յօգուտ Սպ. Սպանդարեանի։ Այդ բանին հասնելու համար, պատմում էին, որ քանիցս Դաշնակցութիւնը առաջարկել է գործի վճիռը յետաձգել մի տարով, վեց ամսով։ Այս նշանակում է խառնել գործը, գրել դատարանը, ընդմիշտ մեղադրանքի տակ պահել Սպանդարեանին և չթողնել, որ նա մասնակցի կաթողիկոսական ընտրութեանը։

Խօսում էին, որ Կոստ. Սպանդարեանին նորից հարց ու փորձ անելու կոչել են Պարիզ, բայց նա չի եկել. այժմ նորից կանչել են, դարձեալ չի եկել։ Եւ մի տաքգլուխ դաշնակցական ասում է, թէ նրան տեսել են արդէն, ինչպէս կը համարձակուի նա գալու, քանի որ Դաշնակցութիւնը գործի յետաձգումն է կամենում։ Մէկն ասում է դաշնակցականներից,—մասնաւորը պէտք է զոհել ընդհանուրին։ Մասնաւոր ասելով պէտք է հասկանալ Սպանդարեան-անմեղութիւնը. իսկ ընդհանուր խօսքի թարգմանութիւնն է—«Դաշնակցութիւն» կոչեցեալ կազմակերպութիւնը։ Ոմանք «ի նոյանէ» ասում էին ցինիկաբար. «ինչ մի մեծ յանցանք է, որ Սպ. Սպանդարեանը ամբաստանուել է անմեղ տեղը. ինչքան էլ որ նշանաւոր լինի, բարձր լինի—նա մի անհատ է. մեծ բան է. առաջին անգամն է, որ անմեղը ամբաստանւում է և տուժում. եթէ ցաւելու բան կայ այս գործի մէջ, Դաշնակցութեան գործ դրած տակտիկան է, որ սխալ է եղել։

Այս կողմից, այն կողմից խօսակցութեան միջամտում էին՝ «սկզբունքը» է գերադասելի և դա պէտք է այս գործում տիրապետողը լինի. սկզբունքին պէտք է զոհել անհատը, նրա պատիւը, ճշմարտութիւնը, ամեն բան. կեցցէ սկզբունքը։

—Զբացատրեցիք, ո՞րն է այդ սկզբունքը, հարցրեց մէկը։

—Ջե՛ս իմանում. Դաշնակցութեան շահերը, վրայ է տալիս միւսը։

—Այդ սկզբունքի համար կարելի է թալանել, անմեղին մեղաւոր ճանաչել, սպանութիւն գործել, գոչում է միւս կողմից մի տափակագլուխ ոգևորուած։

—Եթէ յաջողութեամբ վարուելու լինենք, այդ սկզբունքով կարելի է ոչնչացնել և հայոց ազգը, եկեղեցին, էջմիածինը, ընդհատում է մի երիտասարդ ուսանող, որ դեռ թարմ է և Դաշնակցութեան «պատմութիւնից» տեղեակ չէ։

—Ի հարկէ, միանգամից խօսքը կտրում են միքանի կողմից, ազգ թէ եկեղեցի, այն ամենը, որ Դաշնակցութեան առաջընթացութեան խոչընդոտ է հանդիսանում, պէտք է կործանել, ոչնչացնել։ Սա բնական օրէնք է։ Ինչո՞ւ անհանգստանանք։ Դաշնակցութիւնը—ինքը ազգն է. մտածեցէք, 175 հազար անդամ։ Ի՞նչպէս կարող է Դաշնակցութիւնը թոյլ տալ, որ մի անհատ նրան յաղթէ, որքան և նա խոշոր լինի, անմեղ լինի, հասկացէք... «Նոր-Դարի» խմբագրի դժբաղդութիւնն է, որ ընկել է այդ սկզբունքի արանքը։

Մի երիտասարդ ճարտարապետ ինձ բացատրում է Սպանդարեանի դէմ գործ դրած սխալ տակտիկայի միտքը։ Որ ասում են, թէ Դաշնակցութեան գործ դրած տակտիկան սխալ է, պէտք է իմանալ, թէ ո՞րն է ուղիղ տակտիկան։ Ուղիղն այն է, ասաց ինձ այդ պարոնը, որ Դաշնակցութիւնը նախ պէտք է սպանել տար Սպանդարեանին և յետոյ հրատարակէր իր մեղադրանքը Մենշիկովեան վկայութիւններով կամ, ինչպէս ասել էր՝ անժխտելի փաստագրերով։ Ջկայ այլևս Սպանդարեան—կան փաստագրեր. ո՞վ պէտք է կարողանար այնուհետև հերքել ու մերկացնել սուտը, կեղծիքը...

Պատմում էին, որ հետզհետէ «Նոր-Դարի» խմբագրի և «Դրօշակի» խմբագրի միջև յարաբերութիւնները լարուել են. սկզբում միմեանց մօտեցած են եղել, իսկ յետոյ տեղի են ունեցել խիստ և աղմկալի ընդհարումներ նրանց միջոցին։

Ես փորձեցի տեսնուել Բուրցևի հետ կամ նրա մօտիկ մարդկանց, որպէսզի գործից ճիշտ տեղեկութիւն առնեմ, բայց չյաջողուեց։ Ցանկսի վերջերին ամենքը ցրւում են, գնում են ջրեր կամ գիւղեր հանգստանալու։

Ի՞նչ անեմ, մտածեցի՝ գնամ «Նոր-Դարի» խմբագրին ներկայանամ, գուցէ մի բան իմանամ նրանից։

Պարոն Դ., որ, իր ասելով, տասնհինգ տարի առաջ Պարսկաստանից թղթակցել է «Նոր-Դարին», ընկերացաւ ինձ և մենք միասին գնացինք Սպանդարեանի բնակարանը՝ Hôtel du Brezil (rue le Goff, 10)։

Փարիզ.

Գ. Թ.

# ՄԱՄՈՒԼ

—

«Հորիզոնի» № 229-ում Բէլ ստորագրութեամբ մի պարոն Սրբ. Օրմանեանի վերաբերութեամբ՝ «Մշակի», «Արձագանքի» և «Նոր-Դար»-ի անցեալներում արտայայտած կարծիքներն է առաջ բերում, երևի ցոյց տալու համար, որ այսօր նրա հակառակն են խօսում ու գրում։

Ինչպէս երևում է, պ. Բէլը յիշեալ թերթերի հին համարները թերթելու պարապմունքին է յանձն առել, ուստի, կարծում ենք, մեծ ծառայութիւն արած կը լինէր, եթէ նոյնպէս թերթէր «Մշակի» 91—92 թ.թ. համարները, ուր նա շատ հետաքրքիր յօդուածների կը հանդիպէր, թէ այսօրուայ հորիզոնական պարոնները ինչե՛ր են գրել հանգ. Իզմիրլեանի մասին։

Այն միջոցին, երբ «Նոր-Դար»-ը անյայտութիւնից ազատէց բերելով Իզմիրլեանին, կաթողիկոսական գահի միակ արժանաւոր թեկնածուն էր համարում, հորիզոնական պարոնները (չէ՞ որ ներկայ հորիզոնականները նախկին մշակականներն են) «Մշակի» էջերից էլ հայհոյանք չէր մնում, որ չը թափէին Սրբազան Իզմիրլեանի գլխին—«յետադէմ», «խաւարամիտ» և այլն անուանելով նրան։ Հապա ինչպէս եղաւ, որ տարիներ անցնելուց յետոյ՝ նոյն Իզմիրլեանը կաթողիկոսական գահի վրայ աղաղամիտ և այլն դարձաւ։

Երևի 12-ամեայ աքսորուելը Երուսաղէմում նրան այդպէս կերպարանափոխել էին։

Եւ դեռ ասում են, թէ հրաշքի դարն անցել է։

Պարիզի Գ. Թ.-ի թղթակցութիւնը կրճատումներով արտատպում ենք «Հովիտ» շաբաթաթերթից։

—

Սոյն համարի տպագրութեան ծախքը հոգացել են հետևեալ պարոնները.—

N. N., Քալանթարեան Ա., Շահնազարեան Յ., Վաձելեան, Ղլաչեան Խ., Կաֆեան Ս., Կաֆեան Մ., Թևեան Ա., Բօյաջեան Ս., Սիմոնեան, Խօջաբաբաթեան, Մանթաշեան Գ., Եգանեան Ս., Բօզարջեան Յ., Սուաքելեան Բ., Տէր-Աստուրեան Լ., Կիմանտ Մ., իշ. Թումանեան, Շադինեան Ա., X.

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԵԼԷԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ. 7.
Электропечатня Н. Г. Аганьянцъ Полиц. 7.